

Սաակ Տարոնցի

ԱՐԵՎ-ՍԿԱՎԱՌԱԿԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԲՐՈՆՁԵ ԳՈՏԻՆԵՐԻ ԶԱՐԴԱՄՈՏԻՎՆԵՐՈՒՄ

Քանալի բառեր- Ուրարտու, բրոնզե, գոտիներ, զարդամոտիվներ, թևավոր, սկավառակ, արև, արեգակ, գաղափար, պատկեր, նշան, սիմվոլ, խորհրդանիշ, պաշտամունք, կենաց, ուժ, պտղաբերություն, իմաստաբանություն, հարդարանքային, բաղկացուցիչ, տարրեր:

Ուրարտական բրոնզե գոտիները ներկայացնում են հինավուրց արտեֆակտների մի ուրույն խումբ, որոնք որպես մետաղագործական արհեստի յուրահատուկ գլուխգործոցներ ոչ միայն ակնհայտորեն վկայում են ուրարտական մշակույթի աննախադեպ վերելքի մասին, այլև հանդիսանում են բուն ուրարտական կրոնի, աստվածաբանական պանթեոնի և ծիսական-մյուսաբանական պաշտամունքային տարրերի մասին վկայող կարևորագույն աղբյուրներ:

Ուրարտական բրոնզե գոտիների կրոնական-ծիսական նշանակություն ունեցող նշան-սիմվոլներից ամենակարևոր ու նշանակալիցը **Թևավոր արև-սկավառակի խորհրդանիշն** է: Ուրարտական գոտիների որոշ պատկերներում այդ խորհրդանիշը պատկերվում է այլ խորհրդանիշների հետ, երբեմն առանձին, որոշ դեպքերում՝ այլ պատկերների հետ զուգակցված: **Թևավոր արև-սկավառակը** ուներ կարևոր նշանակություն ուրարտական կրոնական և դիցաբանական հասկացությունների համակարգում: Ինչպես հայտնի է, Ուրարտուի բնակիչների համար արևի և դրա հետ սերտորեն կապված կրակի գաղափարները հատուկ պաշտամունքային հասկացություններ էին, և պատահական չէ, որ ուրարտական գլխավոր աստվածների եռյակին (Խալդիի և Թեյշեբայի հետ մեկտեղ) պատկանում էր նաև **Շիվինի Արևի աստվածը**՝ ուրարտական գերագույն դիցություններից մեկը: Ս. Հմայակյանը իր «Վանի թագավորության պետական կրոնը» աշխատության մեջ, վկայակոչելով Վանա լճի ավազանում գտնված Միերի Դուռ հուշարձանի սեպագիր արձանագրությունը, որտեղ նշված են ուրարտական աստվածները և դրանց պատվին զոհաբերված կենդանիները, բազմաթիվ առիթներով անդրադառնում է Շիվինի աստծուն՝ ուրարտական աստվածաբանական պանթեոնի Խալդի, Թեյշեբա և Շիվինի եռյակի ամենակարկառուն կերպարներից մեկին: Նա չափազանց կարևոր տեղեկություններ է հայտնում ուրարտական Շիվինի աստծո մասին: Մեր ուսումնասիրության համար մասնավորապես արժեքավոր են համարվում հետևյալ պատմական փաստերը. ա) Շիվինի անունը ուրարտական սեպագրերում օգտագործվել է հատուկ շումերա-աքքադական Արևի գաղափար-սիմվոլով (**Դ ՈՒՏՈՒ**)¹ ընդգծելով այդ աստծո պաշտամունքի հինավուրց պատմական արմատների առկայությունը Փոքր Ասիայի (հիթիթական **Շու-Շուին** – հուրիական **Շիմիգի** – ուրարտական **Շիվինի**) և Միջագետքի (շումերական **Ուր** – աքքադական **Ուտու**) հին քաղաքակրթություններում, բ) Ուրարտույում **Շիվինի** բառով անվանվում էր նաև **Արև-սկավառակը**², բայց այս անգամ արդեն առանց հատուկ **Դ ՈՒՏՈՒ** գաղափարային նշանի: Հետևաբար ուրարտական աստվածաբանական պանթեոնի մյուսաբանական համակարգում **Շիվինի** սրբազան անունը միաժամանակ գործածվել է որպես անվանում և՛ **Արևի գերագույն աստծո**, և՛ **Արև-սկավառակի** համար, գ) **Շիվինի** սրբազան անունը ուրարտական կրոնական-մյուսաբանական համակարգում ևս ունեցել է որոշակի ժամանակագրական և ծիսակատարային կարևորագույն գործառնություններ – հատուկ **Դ ՈՒՏՈՒ ԻՏՈՒ**. **Շիվինի Ամիս** գաղափարագիր անվանմամբ կոչվել է ուրարտական օրացույցի ամիսներից մեկը, որն Ուրարտուի բնակիչների համար եղել է ամենակարևորներից մեկը և ունեցել է հատուկ ծիսական նշանակություն: Շիվինիի ամ-

¹ Տե՛ս Հմայակյան Ս., Վանի թագավորության պետական կրոնը, Ե., 1990, էջ 44:

² Տե՛ս նույն տեղում, էջ 45:

սում էին կատարվում ուրարտացիների բոլոր տոնախմբությունները, ծիսային արարողությունները և կենդանիների զոհաբերությունները, դ) Ուրարտական գերագույն Շիվինի Արևի աստծուն էին նվիրաբերված և կառուցված բազում տաճարներ, պաշտամունքային կենտրոններ մասնավորապես ուրարտական մայրաքաղաք **Տուշպայում** և **Ուիշինի** քաղաքում¹: Ուրարտական Սարդուրի I-ին արքան Տուշպա մայրաքաղաքը ձոնել էր Շիվինի Արևի աստծուն, մի հանգամանք, որը կարող է հուշել Վանա լճի ավազանում արևապաշտական ավանդույթների հինավուրց արմատների մասին, որոնք եկել էին ուրարտների նախորդներից՝ հուրիներից, դ) Ուրարտական **Շիվինի Արևի աստծո** անվան ծիսական-կրոնական ծագումնաբանությունը ոչ միայն հաստատում է ուրարտական քաղաքակրթության պատմական կապերը Փոքր Ասիայի (հիթիթական **Շիու-Շիունի** – հուրիական **Շիմիզի** – ուրարտական **Շիվինի**) և Միջագետքի (շումերական **Ուդ** – արքադական **Ուտու**) հին քաղաքակրթությունների ծիսական-մյութոսաբանական տրադիցիաներին, այլև վկայում է, որ այդ մշակույթների կրոնաբանական հայացքները վերապրել են պատմական բնաշրջություն կամ էվոլյուցիա, որի հետևանքով էլ ծագումնաբանորեն հաստատվել և աննախադեպ զարգացում է ստացել բուն ուրարտական մյութոսաբանական համակարգը: Այդ կապակցությամբ Ի. Ավագյանը «Էրիախի երկրի կրոնը» հոդվածում կարծիք է հայտնում, որ Ուրարտուի պետական կրոնը կազմված էր տարբեր ժողովուրդների կրոնական պատկերացումներից և ուրարտական կրոնում, բացի ուրարտական աստվածներից, ընդգրկված էին նաև շումերա-արքադական, հուրիական, խեթական (հիթիթական), հայկական դիցություններ և կրոնական-մյութոսաբանական տարրեր²: Ուրարտական կրոնի ծիսական-դիցաբանական տարրերի և մյութոսաբանական կերպարների պատմական-ժամանակագրական ու աշխարհագրական բազմազանությամբ է պայմանավորվում Ուրարտական բրոնզե գոտիների արվեստաբանական լուծումների բացառիկ հարստությունը և թեմատիկ անկրկնելիությունը:

Այն անվիճելի փաստը, որ **Թևավոր արև-սկավառակի** սրբազան խորհրդանիշը հին ուրարտացիների պատկերացումներում անմիջականորեն առնչվում էր գերագույն Շիվինի աստծու հետ վկայակոչվում է Հայաստանի պատմության թանգարանում պահվող և Բ. Պիոտրովսկու կողմից նկարագրված Ուրարտական գոտու բեկորի տեսարաններից մեկով, որտեղ Շիվինի աստվածը պատկերված է ծնկաչոք դիրքում աղոթելիս Արևի էությանը: Իր գլխի վերևում նա պահում է **Թևավոր արև-սկավառակի** խորհրդանիշը³: Ուրարտական քաղաքակրթությանը նվիրված իր աշխատության մեջ Բ. Պիոտրովսկին անդրադառնում է ուրարտական աստվածային պանթեոնին՝ ընդգծելով աստվածների եռյակի՝ Խալդիի, Թեյշեբայի և Շիվինիի գլխավորությունը: Նա Շիվինին կարևորությամբ դասում է երրորդ ուրարտական աստված՝ հիմք ընդունելով Միերի Դռան վրայի սեպագիր արձանագրությունը՝ ուրարտական աստվածների հիշատակած⁴:

Ուրարտական կրոնի գերագույն աստվածների եռյակը՝ Խալդին, Թեյշեբան և Շիվինին աստվածները, հին ուրարտացիների գիտակցության մեջ անմիջականորեն առնչվում էին բնական ահեղ տարերքների հետ: Բ. Պիոտրովսկին նշում է ուրարտական արվեստում Խալդիի, Թեյշեբայի և Շիվինիի պատկերման տարբերությունները, որտեղ առաջին երկուսը պատկերված են կանգնած սրբազան կենդանիների վրա. Խալդին առյուծի, իսկ Թեյշեբան ցուլի վրա՝ խորհրդանշելով, համապատասխանաբար, ամենակալ ռազմական զորությունը և ահեղ բնական տարերքները ամպրոպի, շանթի և կայծակի տեսքով: Իսկ Շիվինին պատկերված էր ծնկաչոք, ձեռքերը վեր՝ դեպի արևը պարզած **Արև-արեգակին** աղոթելիս՝ աղերսելով կենաց ուժ, հավանաբար հանուն պտղաբերության, բարգավաճման և խաղաղ կյանքի⁵: Այսպիսով՝ Բ. Պիոտրովսկու ներկայացրած ուրարտական գերագույն աստվածների եռյակի կերպարային վեր-

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 46:

² Տե՛ս Ավագյան Ի., Էրիախի երկրի կրոնը, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գիտական աշխատություններ, 2013, № 16, էջ 1:

³ Տե՛ս Piotrovsky B., Archaeologia Mundi, Ourartou, Nagel, 1970, page 80.

⁴ Տե՛ս Piotrovskii B., The Ancient Civilization of Urartu, translated from Russian by James Hogarth, New York Cowles Book Co., N.Y., 1969, page 65.

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 65.

լուծությունից մեզ համար պարզ է դառնում, որ չնայած և Շիվինի աստվածը դասվում էր երրորդը ուրարտական դիցարանում, այնուամենայնիվ ուրարտ ժողովրդի բարգավաճ կյանքի և խաղաղ շինարարության համար նա ուներ առաջնային, սկզբունքային նշանակություն: Դրանով է հավանաբար պատճառաբանված Ուրարտական բրոնզե գոտիների պատկերագրության մեջ Շիվինիի պատկերումը՝ որպես ուրարտական երրորդ աստված, զուգակցված Թևավոր արև-սկավառակի հետ, որը մենք դասում ենք որպես ամենակարևոր **Նշան-խորհրդանիշ** ուրարտական գոտիների դիցական նշանների համակարգում, քանի որ նա առավել հաճախ գործածվում է գոտիների աստվածային և դիցական կերպարների հետ, ինչպես նաև՝ առանձին: Այսպիսով՝ այս հիերարխիկ անհամապատասխանությունն ունի իր տրամաբանական բացատրությունը – Շիվինին դասվելով երրորդը ուրարտական դիցարանում, առաջնային էր ուրարտացիների խաղաղ կյանքում և ծառայում էր որպես **կենաց ուժի, արևային էներգիայի և պտղաբերության** սրբազան խորհրդանիշ:

Անդրադառնալով Թևավոր արև-սկավառակի խորհրդանշական Նշանին՝ պետք է նշմարել նրան ներհատուկ **սիմվոլիկ իմաստաբանությունը** կամ **իմաստային գաղափարը**: Արևը, լինելով իրական երկնային մարմին և հանդիսանալով երկրային կյանքի երկնային արգասիքը, տվյալ դեպքում աստվածացվում է Շիվինի գերագույն աստծո կերպարով և ծիսականացվում է հավելյալ կցորդային մանրամասներով այլ ու ծախ կողմերում առկա թևերով և թռչնանման պոչով: Նման գեղարվեստական մեթոդով ուրարտացի վարպետները ստեղծեցին ոչ միայն **Արև-արեգակի** վերացական պատկերը, այլև, ինչը կարևոր է ընդգծել, **հավերժական Արև - դիցական տարերքի իդեալականացված գաղափար-նշան-խորհրդանիշը**: Այդպիսի խորհրդանիշը ուրարտացիների համար վեր էր դասվում պայմանական ընկալումներից՝ ժամանակից, տեղից և այլ իրական ըմբռնումներից՝ ընկալվելով որպես հավերժության, մշտնջենականության և անսպառ կենաց ուժի և էներգիայի անմար աղբյուր: **Թևավոր արև-սկավառակի գաղափար-նշան-սիմվոլի** կարևորությունը Ուրարտական բրոնզե գոտիների պատկերագրության մեջ ամենևին էլ պատահական չէ: Այն ունի պատմականորեն բնաշրջական (էվոլյուցիոն) փուլերի և պատմական ժամանակային ցիկլերի ընթացքում ձևավորված դիցաբանական ծագումնաբանության պատմություն: Ա. Պետրոսյանի կարծիքով ուրարտական **Շիվինի** Արևի գերագույն աստծո անունը ուղղակի ծագումնաբանությամբ առաջացել է հուրիական **Շիմիգի** Արևի աստծո անունից՝ արտահայտելով «Շի» հուրիական-ուրարտական Արևի գաղափարային վանկ-արմատը: Նա ամրապնդում է ուրարտական գերագույն աստվածների հուրիական ծագումը Ամպրոպի գերագույն աստվածների համեմատական համադրությամբ. հուրիական **Թեշուբից** առաջացել է ուրարտական **Թեշեբան**¹: Շիվինի անունը կարող է ծագած լինել նաև խեթական **Շիու, Շիուի, Շիունաի** (Արև, Արևի աստված) բառից՝ մի անգամ ևս պատմականորեն վկայելով ուրարտական աստծու անվան արմատական-ծագումնաբանական կապը **Արևի գաղափարի** հետ²: Բացի դրանի՝ Ա. Պետրոսյանի կարծիքով Ուրարտույում Շիվինի աստծո Արևի գաղափարի արմատացած լինելու փաստը կարելի է գտնել Շիվինիի կնոջ՝ Տուշպուեայի անունում, որ կապված էր Ուրարտուի մայրաքաղաք Տուշպայի հետ³:

Վանա լճի ավազանի շրջանում Այանիս ուրարտական հինավուրց քաղաքի հնագիտական պեղումների ժամանակ Ա. Չիլինգիրոզլուն հայտնաբերել է շատ հազվագյուտ, կարելի է ասել, միակը իր տեսակում **Թևավոր արև-սկավառակի** խորհրդանիշը (տե՛ս նկարներ 3, 4), որը բրոնզե թիթեղ է Արևի սրբազան պատկերներով և, ամենայն հավանականությամբ, բրոնզե գոտու կամ ծիսական հանդերձանքի բեկոր է:

¹ Տե՛ս Պետրոսյան Ա., Խեթերենի հետքեր Հայկական լեռնաշխարհի արևելքում և հարավ-արևելքում, Հայկական Գիտական Համագործակցություն, Խալդյան գրություններ... Հոդվածների ժողովածուի նվիրված Բորիս Պիոտրովսկու 100-ամյակին, ԳԱԱ Գիտություն Հրատարակչություն, Ե., 2010, էջ 65:

² Տե՛ս նույնը, էջ 66:

³ Տե՛ս Պետրոսյան Ա., Ուրարտական գլխավոր աստվածների եռյակը և պետության իշխող վերնախավի ծագման խդիրը (Լեման-Հաուպտի ծննդյան 140-ամյակի առթիվ), Պատմա-բանասիրական Հանդես, 2002, № 2, էջ 249:

Ա. Բաթմազը նկարագրել է այդ խորհրդավոր արտեֆակտը իր հոդվածի մեջ՝ ընդգծելով նրա կապը ուրարտացիների Արևի պաշտամունքի հետ¹:

Մի այլ արտեֆակտ, որը ոսկուց պատրաստված թևավոր արև-սկավառակի խորհրդանիշ է, գտնվեց Այանիսի գլխավոր տաճարի շքամուտքներից մեկում (տե՛ս նկարներ 5, 6), մի հանգամանք, որը անմիջականորեն վկայում է Արևի և դրա հետ կապված աստվածների, հիմնականում Շիվինիի պաշտամունքի բացառիկ կարևորության մասին: Ա. Բաթմազը նշում է, որ այս թևավոր արև-սկավառակը պատրաստված է եղել ոսկուց և կիրառվել է կրոնական արարողությունների համար դիցական նշանակություն ունեցող ծեսերի ընթացքում²: Այսպիսով՝ մեր ուշադրությունը սևեռելով ոսկե թևավոր արև-սկավառակի արտեֆակտի հայտնաբերման փաստի հատուկ ընդգծված կրոնական-ժխական և արարողական նշանակության վրա՝ մենք նույնպես հակված ենք այն մտքին, որ այդ խորհրդանիշը պատկերվում էր Ուրարտական բրոնզե գոտիների վրա հատուկ մտադրությամբ՝ պայմանավորված հին ուրարտացիների կրոնա-ժխական գաղափարներով և մյուսաբանական պատկերացումներով:

Հիմնվելով տվյալ ուսումնասիրվող թեմայի վերլուծաբանական հետևությունների վրա՝ մենք հանգում ենք որոշակի գիտական եզրակացությանը, որ Ուրարտական բրոնզե գոտիներում պատկերված թևավոր արև-սկավառակի սիմվոլները կրում են հստակ արտահայտված խորհրդանշական հատուկ իմաստ՝ արտահայտված հին ուրարտացիների մտածելակերպում տարբեր գիտակցական և իմացական մակարդակներով. **ա) Կրոնական-մյուսաբանական**՝ Արևի աստված Շիվինիի պատկերում՝ արտահայտելով **գերբնականի** գերագույն գաղափարը, **բ) երևոյթային-բնական**՝ բուն Արևի սկավառակի և նրա թևերի, ճառագայթների ճաճանչավոր պոչերի տարրերում՝ արտահայտելով **բնականի** վեհագույն գաղափարը, **գ) մարդկային-բնավորային**՝ Արևի բնական հատկությունների՝ էներգիայի, ջերմության, կրակի և կիզիչ ուժի արտահայտությունները մարդկային բնավորության գծերում, ինչպիսին են ուժը, եռանդը, կամքը, ցասումը, արիությունը, քաջությունը և այլն՝ արտահայտելով մարդկային էության **ներքնային կենսականության** կամ **ներբնականի** գաղափարը: Համաձայն հին ուրարտացիների պատկերացումների՝ Ուրարտական բրոնզե գոտիների վրա պատկերված թևավոր արև-սկավառակի սխրական սիմվոլները միաժամանակ ներմարմնավորում էին երեք պատկերային աշխարհների կամ գիտակցական մակարդակների՝ **գերբնականի, բնականի և ներբնականի** սիմվոլիկ համալրումը: Ուրարտացիները ընդունում էին նաև այդ պատկերային մակարդակների գաղափարային համալրումը որպես անմիջական կապ բնական, ֆիզիկական արևի և գերբնական Շիվինի աստծո միջև, իսկ բրոնզե գոտու վրա պատկերված թևավոր արև-սկավառակի սիմվոլը համարում էին կենսական հատկությունների և դիցաբանական-հրաշագործ էներգիայի անսպառ աղբյուր: Ավելին, հնագույն ուրարտացիների դիցաբանական-մյուսաբանական արձատացած պատկերացումների համաձայն՝ ինչպես ամբողջական Ուրարտական բրոնզե գոտին, այնպես էլ դրանում կանոնավոր պատկերված կրոնական-ժխական բնույթ ունեցող **հարդարանքային բաղկացուցիչ տարրերը** ունեին գերբնական, հրաշագործական ու մոգական ազդեցություններ երկրային ու երկրային կյանքի վրա: Այսպիսով՝ ուրարտական բրոնզե գոտում վերագրվում էին արտասովոր հատկանիշներ, որը պահպանում էր մարդկանց կյանքը, կեցությունը և ունեցվածքը, իսկ պատերազմների, աղետների և փորձությունների ժամանակ փրկում էր գոտին կողոններին, օժանդակում մարտի դաշտում, քաղաքային շինարարության ժամանակ և առևտրական գործարքներում:

Ուրարտական բրոնզե գոտիներում վերը ներկայացրած զարդանախշային և բուսական մոտիվների **հարդարանքային բաղկացուցիչ բարրերի**, տվյալ դեպքում,

¹ St' u Batmaz A., Votive Objects and Their Storage Areas in Urartian Fortresses, Ancient Near Eastern Studies, issue 52, 2015, page 198, figure 29.

² St' u Batmaz A., A New Ceremonial Practice at Ayanis Fortress – the Urartian Sacred Tree Ritual at the Eastern shore of lake Van, JNES, volume 72, Issue 1, April 2013, page 75, figure 23.

Թևավոր արև-սկավառակի օրինաչափային հատկությունների խորհրդանշային բնորոշումները հանգում են վառ արտահայտված **սիմվոլիզմին** կամ **սիմվոլիկ իմաստաբանությանը**: Այդ իսկ պատճառով էլ տվյալ սիմվոլի զարմանալի տեսակային բազմազանությունը տեղ գտավ բազում Ուրարտական բրոնզե գոտիներում: Որպես կրոնական-ժիսական և դիցական-մյութոսաբանական տարր՝ Թևավոր արև-սկավառակը ունեցել է բազում տարբերակներ՝ ամեն մեկը օժտված որոշակի ֆունկցիաներով: Տվյալ տարրի տիպաբանական բազմազանությունը ունի որոշակի նշանակություն ուրարտական մյութոսաբանության մանրակրկիտ ուսումնասիրության համար, քանի որ ակնհայտորեն բացահայտում է ուրարտական դիցաբանական պատկերացումների բարդ համակարգը և **սիմվոլիկ-իմաստաբանական գործառույթները**: Թևավոր արև-սկավառակի սիմվոլիկ-իմաստաբանական գործառույթները տվյալ շատ կարևոր խորհրդանիշը դարձրին բավականին տարածված Ուրարտական բրոնզե գոտիների պատկերագրության մեջ, որտեղ այն հանդիպում է Շիվինի Արևի աստծո կերպարի համադրությամբ, նաև՝ առանձին, այլ բաղկացուցիչ տարրերի հետ զուգակցված: Դիտարկելով Շիվինի գերագույն Արևի աստծո հետ Թևավոր արև-սկավառակի խորհրդանիշի առավել հետաքրքրական օրինակները՝ հարկավոր է մի անգամ ևս նշել Հայաստանի պատմության թանգարանում պահվող նմուշը (տե՛ս նկար 1 և նկար 2), որը պատկանում է առավել արտահայտիչ և թեմատիկորեն հագեցած նմուշների շարքին:

Թևավոր արև-սկավառակի տարբերակների ու տարատեսակների զատման ու տիպաբանական դասակարգման փորձ է կատարել Ռ. Չավուշօղլուն՝ նկատի առնելով, որ ինքնին Թևավոր արև-սկավառակը, բացի **հավերժական Արև-դիցական տարերքի իդեալականացված գաղափար-նշան-սիմվոլ** լինելուց և **զարդանախշային ու բուսական մոտիվների հարդարանքային բաղկացուցիչ տարր** հանդիսանալուց, ոչ միայն որակավորվում է որպես առանձին տեսակ, այլ իր հերթին ունի բազմաթիվ տարատեսակներ¹: Ստամբուլի Ռեզան Հազ թանգարանի ուրարտական բրոնզե գոտիների կատալոգում նա ներկայացրել է դրանց բաղկացուցիչ տարրերի տեսակները և Թևավոր արև-սկավառակի տիպաբանական տարատեսակները: Ներկայացրած տասներկու տարբերակներում (տե՛ս. նկար 7 ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի, լ) մենք կարող ենք այդ տարրերի պատկերներում գտնել էական նմանություններ և տարբերություններ, մի հանգամանք, որը ակնհայտորեն մատնանշում է, որ Թևավոր արև-սկավառակները՝ լինելով Ուրարտական բրոնզե գոտիների դիցաբանական կարգերի և հարդարանքային մակարդակների էական տարրեր, իրենց հերթին բաղկացած են ավելի մանր բաղկացական տարրերից: Այդ նկարագրային մանրամասների հանրագումարից էլ կազմվում են Թևավոր արև-սկավառակի տիպաբանական տարբերակները, որոնք ակնառու կերպով հուշում են մեզ, որ Ուրարտական բրոնզե գոտիների պատկերագրությունը արվեստաբանական բարդ երևույթ է՝ կազմված իրարից հիերարխիկորեն կախված և միմյանցով պայմանավորված դիցաբանական ու մյութոսաբանական տարրերից: Այդ բարդ, սակայն հստակ ընդգծված և հիերարխիկորեն դասակարգված համակարգը յուրաքանչյուր առանձին Ուրարտական բրոնզե գոտին դարձնում էր մի ուրույն ստեղծագործություն կրոնական-ժիսական անկրկնելի տարրերով և դիցաբանական-մյութոսաբանական կոնտեքստով:

Ռ. Չավուշօղլուի ներկայացրած Թևավոր արև-սկավառակի ձևերի տիպաբանական տարբերակներում ակնհայտորեն աչքի են ընկնում կաղապարային նմանությունները և կազմավորիչ բաղադրամասերի տարբերությունները: Նմանությունները ցույց են տալիս բացած թևերի, թռչնանման պոչերի և ճաճանչավառ ճառագայթների առկայությունը, իսկ տարբերությունները՝ ամենակենտրոնում թևավոր միջուկ-նեցուկ սկավառակի առկայությունը կամ բացակայությունը կամ աստվածային մարդակերպ կերպարի փոխարինությունը: Էական տարբերություններ են ճաճանչավառ ճառագայթները, որոնք ավարտվում են կլորներով կամ կլորակների փնջով, ծաղիկներով կամ ծաղ-

¹ St' u Çavuşoğlu R., Urartian Belts – Rezan Has Museum Urartian Belt Collection; Rezan Has Museum, Istanbul 2014, page 183, figures 1-12.

կանման կոկոններով, որոշ տարբերակներում՝ լրիվ առանց ճառագայթների: Հետաքրքիր է կլորով ավարտվող ճառագայթներով տարբերակը, որին կպած է մի փոքր կլորակ և: Կան նաև զգալի տարբերություններ վեր խոյացող ճառանչների պատկերներում, որոնք կարող են լինել ուղիղ կամ կոր, պտուտակներով և ուղիղ ճառանչներով կամ էլ լրիվ՝ առանց դրանց: Պետք է հասկանալ, որ հին ուրարտացիների համար Թևավոր արև-սկավառակի յուրահատուկ սիմվոլիկ ձևերը ենթադրում էին տիպաբանական հատուկ առումներ և կապված էին սիմվոլիզմի կամ սիմվոլիկ իմաստաբանություն կատեգորիաների հետ:

Ուրարտական բրոնզե գոտիների Թևավոր արև-սկավառակի պատկերումներում կարևոր նշանակություն ունեն այդ իմաստաբանական խորհրդանիշի **դիրքը** և **համադրումը** այլ տարրերի հետ: Դրա **դիրքային-հարդարանքային գործառույթը** այլ Նշան-պատկեր-սիմվոլների հետ, նամանավանդ սրբազան Կենաց ծառի խորհրդանիշի հետ, տիպիկ է ուրարտական բրոնզե գոտիների պատկերագրության մեջ: Թևավոր արև-սկավառակի տվյալ գործառույթի լավ օրինակ է Ու. Ջեյդլի կատալոգում (տե՛ս նկար 9) պատկերագրող ուրարտական բրոնզե գոտու մի բեկոր՝ Շիվինի արևի աստծվածը Թևավոր արև-սկավառակի մեջ սրբազան կենդանու վրա, որտեղ ակնհայտորեն երևում են այն տարրերը, որոնք զուգակցված են երկրաչափական նախշային բջիջներում գտնվող սուրբ կերպարների հետ՝ խորհրդանշելով Թևավոր արև-սկավառակի աստվածապաշտական բնույթը¹: Տվյալ բեկորը ունի տարբերություններ Թ. Կենդալի ներկայացրած Շիվինիի պատկերում (տե՛ս նկար 8), որը կարելի է համարել դասական և հնարավոր է, որ այն հանդիպի ուրարտական այլ տեսակի բրոնզե արտեֆակտների պատկերագրության մեջ: Թևավոր արև-սկավառակի խորհրդանիշը, բացի Արևի կենարար, կենսական և էներգետիկ հատկություններն արտահայտելուց, իր կցված թևերով արտահայտում է **ինքնության, ինքնուրույնության և հավերժության գաղափարները**: Դա է հիմնական պատճառներից մեկը, որ Թևավոր արև-սկավառակի խորհրդանիշը հաճախ պատկերվում է ինքնուրույն, իր սեփական կոնտեքստում և հստակ նշանակությամբ (տե՛ս նկար 10 և 11): Ի. Կադարի և Դ. Բոնակոսսիի աշխատություններից բերված այս օրինակները և՛ տիպիկ են իրենց տիպաբանական առումներով և՛ ունեն որոշակի յուրահատկություններ, որոնք արժանի են ուրարտագետների ուշադրությանը և մանրակրկիտ զննմանը: Նույնը կարելի է ասել նաև Շիվինի Արևի գերագույն աստծո հետ պատկերված սակավաթիվ ուսումնասիրված օրինակների մասին (տե՛ս նկար 12, 13, 14) Ռ. Չավուշոլլու վերջերս հրատարակած Ռեզան Հազ թանգարանի Ուրարտական բրոնզե գոտիների կատալոգում:

Թևավոր արև-սկավառակի այս հիերարխիկ համապատասխանությունը կամ համապարփակությունը, ներդաշնակ առնչությունը ուրարտացիների բոլոր պատկերային մակարդակների հետ, դրանց սիմվոլիկ համակողմանիությունը վկայում են այդ Նշան-սիմվոլ-գաղափարի բացառիկ և, կարելի է ասել, արմատական կարևորության մասին: Ուրարտացիների համար արևը ամեն ինչ էր, ամենուրեք, մշտնջենական և արտահայտում էր **կենաց ուժի, կենարար էներգիայի և հավերժության գաղափարները**: Թևավոր արև-սկավառակի այդ գաղափարային նեցուկը հիերարխիկորեն լրիվ համապատասխանում և համազոր է Ուրարտական բրոնզե գոտիների մյուս ամենակարևոր ու ևս արմատական նշանակություն ունեցող սիմվոլին՝ Կենաց Ծառին:

Ամփոփելով Ուրարտական բրոնզե գոտիներում պատկերված ամենակենսական և կարևորագույն տարրերի՝ **Թևավոր արև-սկավառակի և Շիվինի Արևի աստծո** կերպարների բնութագրային ուսումնասիրումը՝ մենք սկսում ենք ավելի համոզվել այն գիտական փաստին, որ Ուրարտական բրոնզե գոտիների զարդամոտիվներում հնուտ արվեստաբանական միջոցներով և բարձր գեղարվեստականություն ունեցող հնարքներով արտացոլվել են հին ուրարտացիների կրոնական պատկերացումները,

¹ St' u Seidl U., Bronzekunst Urartus, Verlag Philipp Von Zabern, Mainz am Rhein, 2004, Tafel 59.

¹ St' u Çavuşoğlu R., Urartian Belts – Rezan Has Museum Urartian Belt Collection, Rezan Has Museum, Istanbul 2014, page 183, figures 1-12.

ծիսական-արարողական ավանդույթները, հավատալիքային ընկալումները և պաշտամունքային աշխարհայացքը: Այսպիսով՝ Ուրարտական բրոնզե գոտիները՝ որպես բարձր մշակութային նշանակություն ունեցող արտեֆակտներ և էական մյուսաբական տարրերի ուրույն և անկրկնելի մշակութային աղբյուրներ, ստանում են բացառիկ նշանակություն ոչ միայն ուրարտագիտական ուսումնասիրությունների բնագավառում, այլև ստանձնում են վճռոշող նշանակություն համայն ուրարտագիտության համար:

Саак Таронци, Символическая осмысленность орнаментально-украшательских мотивов Урартских бронзовых поясов,—Темой статьи является детальное описание орнаментально-украшательских мотивов Урартских бронзовых поясов, их своеобразных функций в системе художественных концепций Урартской иконографии, и то специальное символическое осмысление, которое гармонично представляет эстетико-художественные особенности, изобразительно-тематические отражения и смысловые-идейные принципы этих орнаментально-украшательских элементов. В начале статьи представляются роль и значение орнаментально-украшательских мотивов Урартских бронзовых поясов как их важных композиционных компонентов и составных элементов дизайна, так и их специфический символизм в мифологическом контексте религиозно-обрядной системы урартского веро-вательного мировоззрения. Затем представляется один из самых главных и насущных знаков-символов этой своеобразной системы – Крылатое Солнце-Диск, раскрывается непосредственная связь этого священного символа с Солнцем-Солнечным Кругом и поклонением богу Солнца Шивини.

Saak Tarontsi, Symbolic meaningfulness of ornamental-decorational motives of Urartian bronze belts,— The immediate theme of the article is the detailed description of ornamental-decorational motives of Urartian bronze belts, their peculiar functions in the system of artistic concepts of Urartian iconography, and that specific symbolic comprehension, which harmoniously represents aesthetic and artistic features, figurative-thematic reflections and notional-ideological principles of those ornamental-decorational elements. At the beginning of the article the role and significance of ornamental-decorational motives of Urartian bronze belts are presented, as of their important composite components and constituent elements of design, as well as their specific symbolism in the mythological context of religious-ritual system of Urartian beliefs' world-view. Hereafter, one of the most important and vital signs-simbols of this specific system is presented – Winged Sun-Disk, and the direct connection of that sacred symbol with Sun-Sunny Circle and the worship of Sun god Shivini is revealed.